ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1

2021թ. սեպտեմբերի 27-ի կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստի

Օրակարգ

1. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական ատենախոսությունների հաստատում
2. Գիտական աշխատանքների մասին տեղեկատվության ներկայացում
3. 2021-2022 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի փոխադարձ դասալսումների ժամանակացույցի մասին քննարկում
4. Ուսումնական դաշտային պրակտիկաների վերականգնում
5. Ընթացիկ հարցեր

Նիստը վարեց կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Պիպոյանը: Նիստին մասնակցում էր կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 13 (տասներեք) անդամ:

1. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումը 2021-2022 ուսումնական տարվա ավարտական և մագիստրոսական աշխատանքների թեմաների մասին: Դասախոսները ներկայացրեցին իրենց կողմից նախատեսված թեմաների վերնագրերը: Ս.Պիպոյանը դասախոսներին հորդորեց ուշադրություն դարձնել ավարտական և մագիստրոսական աշխատանքներում՝ ուսանողի կողմից կատավող հետազոտական աշխատանքի իրականացմանը:Ներկայացված վերնագրերում կատարվեցին որոշակի փոփոխություններ: (Թեմաները կցվում են)

Որոշեցին՝

Հաստատել:

2. **Լսեցին՝**

Ամբիոնի դասախոսների կողմից գիտամեթոդական աշխատանքների իրականացման մասին: Դասախոսները ներկայացրեցին 2021 թվականի ընթացքում իրենց կողմից հրատարակած և տպագրության ուղարկված գիտական աշխատանքները: (Ցուցակը կցվում է)

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

3. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումը ամբիոնի դասախոսների փոխադարձ դասալսումների անհրաժեշտության մասին: Ամբիոնի վարիչը հայտնեց, որ յուրաքանչյուր դասալսման արդյունք պետք է գրանցվի դասալսումների գրանցամատյանում: Ս.Պիպոյանը ներկայացրեց դասալսումների ժամանակացույցը: (Կցվում է)

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն

4. Լսեցին՝

Ս. Պիպոյանի հաղորդումը ուսումնական դաշտային պրակտիկաների վերականգնման հարցի վիրաբերյալ:

Արտահայտվեցին՝

Տ. Թանգամյանը, Ռ. Սիմոնյանը, կենսաբանական գիտությունների թեկնածուներ՝ Մ.Դալաքյանը և Ն. Հարությունյանը, ովքեր կարևորեցին ուսուցման որակի բարձրացման գործընթացում դաշտային ուսումնական պրակտիկաների նշանակությունը և վերականգնման անհրաժեշտությունը:

Որոշեցին՝

Միջնորդել ֆակուլտետի խորհուրդ ԿՔԴՄ ամբիոնում ուսումնական դաշտային պրակտիկաները վերականգնելու առաջարկը քննարկելու համար:

5.Լսեցին՝

Տ. Թանգամյանի հաղորդումն այն մասին, որ անհրաժեշտ է ամբիոնին տրամադրել 802 դասասենյակը՝ ինչպես ամբիոնի դասախոսական անձնակազմի կողմից իրենց մասնագիտական գործունեության ընթացքում, այնպես էլ ուսանողների կողմից՝ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի իրականացնելու նպատակով:

Որոշեցին՝

Ներկայացնել զեկուցագիր 802 դասասենյակը ամբիոնին տրամադրելու համար: (Զեկուցագիրը կցվում է)

Առդիր՝ 20 էջ

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ս.ՊԻՊՈՅԱՆ**

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Դ.ԱՆԻԿՅԱՆ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2

2021թ. հոկտեմբերի 26-ի կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստի

Օրակարգ

1. Մեթոդիստ-ղեկավարների հաղորդումը 3-րդ կուրսի մանկավարժահետազոտական պրակտիկայի ընթացքի և 4-րդ կուրսի մանկավարժահետազոտական պրակտիկայի ավարտի մասին
2. Հեռավար ուսուցման հետ կապված խնդիրների մասին
3. Մագիստրատուրա 2-րդ կուրսի ուսանողների հաշվետվությունը իրենց կողմից կատարվող մագիստրոսական թեզերի մասին
4. Ընթացիկ հարցեր

Նիստը վարեց կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Պիպոյանը: Նիստին մասնակցում էր կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 24 (քսանչորս) անդամ:

1.Լսեցին՝

Ամբիոնի դասախոսներ Մ.Դալլաքյանի, Ն. Հարությունյանի, ֆակուլտետի առկա ուսուցման բաժնի պրակտիկայի ղեկավար Ի. Սիրեկանյանի հաղորդումները և 4-րդ կուրսի ուսանողների ելույթները՝ մանկավարժական պրակտիկայի կազմակերպման ու իրականացման արդյունքների և հիմնախնդիրների մասին:

Ամբիոնի վարիչը բարձրաձայնեց, որ շատ կարևոր է լսել նաև ուսանողների կարծիքը մանկավարժական պրակտիկայի վերաբերյալ: Ս. Պիպոյանը հորդորեց մեթոդիստ-ղեկավարներին ավելի հետևողական լինել դպրոցում ուսանողների գործունեությանը, տեղեկացված լինել, թե ինչպես է անցնում ուսանողների առօրյան դպրոցում, հաղորդալուր լինել ուսանողների խնդիրներին և լուծել դրանք:

Արտահայտվեցին՝

Ա. Մարիկյանը, Ն. Պապանյանը, Լ. Սրապիոնյանը:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

2.Լսեցին՝

Ամբիոնի վարիչի հաղորդումը համալսարանում հեռավար ուսուցման անցման մասին: Ս. Պիպոյանը կարևորեց, որ հեռավար դասերի կազմակերպման

պայմաններում չպետք է տուժեն ինչպես կրթության որակը, այնպես էլ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի շրջանակներում իրականցվող փորձարարական աշխատանքները:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

3.Լսեցին՝

Մագիստրատուրայի 2-րդ կուրսի թվով 8 ուսանող ներկայացրերին հաշվետվություն, իրենց կողմից կատարվող մագիստրոսական թեզերի վերաբերյալ:

- ✓ **«Կենսաբանություն» մասնագիտություն**

1. Արևյան Մարիամ Պողոսի
2. Գրիգորյան Մերի Գեղամի
3. Թադևոսյան Լիլիթ Ավետիսի
4. Կարապետյան Տիգրան Համլետի
5. Քոսյան Հռիփսիկ Քերոբի

- ✓ **«Քիմիա» մասնագիտություն**

1. Աբրահամյան Զվարթ Վազգենի
2. Մկոյան Լենա Գագիկի
3. Պողոսյան Հայկանուշ Ռուբենի

Որոշեցին՝

Յուրաքանչյուր աշխատանքի ներկայացումից հետո դասախոսների կողմից հնչեցվեցին հարցեր, ծավալվեցին մասնագիտական քննարկումներ, ուսանողներին առաջարկվեց կատարել տեխնիկական և բովանդակային փոփոխություններ և լրացումներ:

Որոշվեց <<Կենսաբանություն>> մասնագիտության մագիստրատուրա 2-րդ կուրսի ուսանող՝ Տիգրան Կարապետյանի մագիստրոսական թեզի վերնագիրը:

4.Լսեցին՝

Ս.Պիպոյանը ներկայացրեց ամբիոնի դասախոսների կողմից կազմած հարցերը, որոնք պետք է տրամադրվեն ուսանողներին նախնական քննություն իրականացնելու համար:

Արտահայտվեցին՝

Մ. Երիցյանը առաջարկեց ուսանողների կողմից անհասկանալի հարցերի քննարկման համար կազմակերպել խորհրդատվություն:

Որոշեցին՝

Սույն թվականի հունվար ամսից կազմակերպել խորհրդատվություն:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ս.ՊԻՊՈՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Դ.ԱՆԻԿՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3

2021թ. նոյեմբերի 30-ի կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստի

Օրակարգ

1. Կառավարման լիազոր մարմինների և գիտության պետական կոմիտեի կողմից ներկայացված թեմաների քննարկում
2. Ուսուցման գործընթացի իրականացման հետ կապված խնդիրներ
3. Դասալսումների արդյունքների քննարկում
4. Բակալավր 4-րդ կուրսի ուսանողների հաշվետվությունը իրենց կողմից կատարվող ավարտական աշխատանքների մասին (Ս.Պիպոյանի, Տ. Թանգամյանի և Ռ. Սիմոնյանի դիպլոմնիկներ)
5. Ընթացիկ հարցեր

Նիստը վարեց կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Պիպոյանը: Նիստին մասնակցում էր կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 12 (տասներկու) անդամ:

1. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումն կառավարման լիազոր մարմինների և գիտության պետական կոմիտեի կողմից ներկայացված թեմաների շուրջ: Ս. Պիպոյանը նշեց, որ դասախոսները կարող են հավաքել իրենց համար թիմ և ղեկավարել այն կամ ընդգրկվել որևէ թիմում և կատարել հետազոտություններ այն թեմաների շուրջ, որոնցով կարող են աշխատել:

Ամբիոնի վարիչը ներկայացրեց այն թեմաները՝ որոնք առաջարկվել էին դասախոսների կողմից, իսկ այն դասախոսներին, ովքեր սահմանված ժամկետում չէին ուղարկել թեմաներ՝ հանձնարարվեց մեկ օրվա ընթացքում դրանք ներկայացնել:

Որոշեցին՝

Ընդունել ի կատարումն:

2. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումն ուսումնական գործընթացի կազմակերպման և իրականացման առկա վիճակի և խնդիրների մասին: Ամբիոնի վարիչը հորդորեց դասախոսների կողմից այս կամ այն հարգելի պատճառով դասը/երը չիրականացնելու դեպքում փորձել անպայման դրանք լրացնել՝ համաձայնեցնելով ֆակուլտետի դեկանատի հետ:

Որոշեցին՝

- Ընդունել ի գիտություն:
- Ընդունել ի կատարումն:

3. **Լսեցին՝**

Ամբիոնի վարիչի հաղորդումը դասալսումների արդյունքների մասին: Ս.Պիպոյանը հայտնեց, որ առաջին կիսամյակում կատարվել են դասալսումներ ըստ նախատեսված ժամանակացույցի, տրվել են համապատասխան կարծիքներ: Ամբիոնի վարիչը հայտնեց, որ փոխադարձ դասալսումները շարունակվեն մինչև ս.թ.-ի դեկտեմբեր ամսվա ավարտը: Ս. Պիպոյանը նշեց, որ դասալսումները շատ կարևոր են փորձի փոխանակման, կրթության որակի բարելավման և դասապրոցեսի կատարելագործման տեսակետից:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

4. **Լսեցին՝**

«Կենսաբանություն» մասնագիտության բակալավրիատի 4-րդ կուրսի թվով 9 ուսանողի ներկայացրած հաշվետվություններն իրենց կողմից կատարվող ավարտական աշխատանքների վերաբերյալ:

1. Կյուրեղյան Էլեն Հայկի

2. Ամիրջանյան Ռոզա Ռուբենի

3. Թամրազյան Անի Դավիթի

4. Մարգարյան Անգելինա Լևոնի

5. Մարիկյան Արփինե Հովհաննեսի

6. Եղիազարյան Արփինե Հովհաննեսի

7. Օրբելյան Անահիտ Վլադիմիրի

8. Պապանյան Նարինե Արսենի

9. Կարախանյան Լարիսա Ռուսլանի

Որոշեցին՝

Յուրաքանչյուր աշխատանքի ներկայացումից հետո դասախոսների կողմից հնչեցվեցին հարցեր, ծավալվեցին մասնագիտական քննարկումներ, ուսանողներին առաջարկվեց կատարել տեխնիկական և բովանդակային փոփոխություններ և լրացումներ:

5. Լսեցին՝

Մ. Երիցյանի հաղորդումն առ այն, որ <<Քիմիա>> մասնագիտության 1-ին կուրսում դասավանդվող <<Աշխատանքի պաշտպանություն և անվտանգության հիմունքներ>> առարկային բավականին շատ ժամաքանակ է տրամադրված և անհրաժեշտություն կա վերանայել ուս. պլանները:

Որոշեցին՝

Ս. Պիպոյանը առաջարկեց գրել հիմնավորում <<Աշխատանքի պաշտպանություն և անվտանգության հիմունքներ>> առարկայի ժամաքանակի կրճատման համար, համապատասխան մասնագիտությունների ուսումնական պլաններում փոփոխությունների մասին համալսարանի ղեկավարությանը ներկայացնելու համար:

6. Լսեցին՝

Ս. Պիպոյանի կողմից ներկայացված ամբիոնի տարեկան հաշվետվությունը:

Որոշեցին՝

Հաստատել:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ս.ՊԻՊՈՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Դ.ԱՆԻԿՅԱՆ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N4

2021թ. դեկտեմբերի 14-ի կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստի

Օրակարգ

1. Ամբիոնի հայցորդների և ասպիրանտի ատեստավորում
2. Բակալավր 4-րդ կուրսի ուսանողների հաշվետվությունը իրենց կողմից կատարվող ավարտական աշխատանքների մասին (Մ. Դալլաքյանի, Ն. Հարությունյանի, Ա. Զիրոյանի, Ք. Կարապետյանի և Ա. Կիրակոսյանի դիպլոմնիկներ)
3. Ընթացիկ հարցեր

Նիստը վարեց կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Պիպոյանը: Նիստին մասնակցում էր կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 11 (տասնմեկ) անդամ:

1.Լսեցին՝

Ս.Պիպոյանի հաղորդումն ամբիոնի ասպիրանտ Լիլիթ Կոմիտասի Հակոբյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և ղեկավար նշանակելու վերաբերյալ: Ատենախոսության թեմա առաջարկվեց «Քիմիայի ուսուցչի մեթոդական պատրաստման կազմակերպման տեսությունը և պրակտիկան կոմպետենտային մոտեցման հիման վրա», իսկ գիտական ղեկավար՝ մանկավարժական գիտությունների դոկտոր (քիմիայի դասավանդման մեթոդիկա, ԺԳ.00.02) Լիդա Արշակի Սահակյանը:

Արտահայտվեցին՝

Մ.Երիցյանը, Տ. Թանգամյանը, Ա. Բաբախանյանը:

Որոշեցին՝

Ամբիոնի ասպիրանտ Լիլիթ Հակոբյանի թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել «Քիմիայի ուսուցչի մեթոդական պատրաստման կազմակերպման տեսությունը և պրակտիկան կոմպետենտային մոտեցման հիման վրա», իսկ որպես գիտական ղեկավար՝ մանկավարժական գիտությունների դոկտոր (քիմիայի դասավանդման մեթոդիկա, ԺԳ.00.02) Լիդա Արշակի Սահակյանին:

Քվեարկության արդյունքներ՝

Կողմ՝ 11

Դեմ՝ 0

Ձեռնպահ՝ 0

Լսեցին՝

Ամբիոնի ասպիրանտ Լիլիթ Հակոբյանի հաշվետվությունը 2021թ.-ի ընթացքում կատարած աշխատանքների մասին:

Արտահայտվեցին՝

Մ.Երիցյանը, Տ. Թանգամյանը, Ա. Բաբախանյանը:

Որոշեցին՝

Ներկայացված հաշվետվությունների և ամբիոնի դասախոսների դրական կարծիքների հիման վրա ատեստավորել Լիլիթ Հակոբյանին:

Քվեարկության արդյունքներ՝

Կողմ՝ 11

Դեմ՝ 0

Չեռնպահ՝ 0

Լսեցին՝

Ամբիոնի հայցորդ Նարինե Ստեփանյանի հաշվետվությունը 2021թ.-ի ընթացքում կատարած աշխատանքների մասին (հաշվետվությունը կցվում է):

Արտահայտվեցին՝

Մ. Երիցյան, Տ.Թանգամյանը, Ն. Հարությունյանը, Մ.Դալլաքյանը:

Որոշեցին՝

Ներկայացված հաշվետվությունների և ամբիոնի դասախոսների դրական կարծիքների հիման վրա ատեստավորել Նարինե Ստեփանյանին:

Քվեարկության արդյունքներ՝

Կողմ՝ 11

Դեմ՝ 0

Չեռնպահ՝ 0

Լսեցին՝

Ամբիոնի հայցորդ Անուշ Խաչիկյանի հաշվետվությունը 2021թ.-ի ընթացքում կատարած աշխատանքների մասին (հաշվետվությունը կցվում է):

Արտահայտվեցին՝

Մ.Երիցյանը, Ա. Զիրոյանը:

Որոշեցին՝

Ներկայացված հաշվետվությունների և ամբիոնի դասախոսների դրական կարծիքների հիման վրա ատեստավորել Անուշ Խաչիկյանին:

Քվեարկության արդյունքներ՝

Կողմ՝ 11

Դեմ՝ 0

Չեռնպահ՝ 0

Լսեցին՝

Ամբիոնի հայցորդ Արմենուհի Փիլթակյանի հաշվետվությունը 2021թ.-ի ընթացքում կատարած աշխատանքների մասին (հաշվետվությունը կցվում է):

Որոշեցին՝

Ներկայացված հաշվետվությունների և ամբիոնի դասախոսների դրական կարծիքների հիման վրա ատեստավորել Արմենուհի Փիլթակյանին:

Քվեարկության արդյունքներ՝

Կողմ՝ 11

Դեմ՝ 0

Չեռնպահ՝ 0

2.Լսեցին՝

«Կենսաբանություն» մասնագիտության բակալավրիատի 4-րդ կուրսի ստորև նշված 15 ուսանողի հաշվետվությունները՝ ավարտական աշխատանքների շրջանակներում իրականացրած ուսումնասիրությունների վերաբերյալ:

1. Ալեքսանյան Թամարա Համայակի
2. Ավդալյան Ռիմա Մկրտչի
3. Արշակյան Եպրաքսյա Հայկի
4. Գևորգյան Աննա Վրեժի
5. Գրիգորյան Հասմիկ Գագիկի
6. Գրիգորյան Նարեկ Հովիկի
7. Զանդարյան Քնարիկ Գրիգորի
8. Իվանյան Սեդա Բագրատի
9. Խաչատրյան Գայանե Արմենի
10. Կարապետյան Մերի Բայանդուրի
11. Կիրակոսյան Զարուհի Աղվանի
12. Ղալաչյան Մարիամ Կարենի
13. Շիրինյան Ռուզաննա Նահապետի
14. Սրապիոնյան Լենա Հովսեփի
15. Վարդանյան Անի Պետրոսի

Քննարկեցին՝

Յուրաքանչյուր աշխատանքի ներկայացումից հետո դասախոսների կողմից հնչեցվեցին հարցեր, ծավալվեցին մասնագիտական քննարկումներ, ուսանողներին առաջարկվեց կատարել որոշակի տեխնիկական և բովանդակային փոփոխություններ և լրացումներ:

Որոշեցին՝

«Կենսաբանություն» մասնագիտության բակալավրիատի 4-րդ կուրսի թվով 15 ուսանողի երաշխավորել շարունակել հետագա աշխատանքները հանձնարարված թեմաների շրջանակներում:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ս.ՊԻՊՈՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Դ.ԱՆԻԿՅԱՆ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N5

2022թ. փետրվարի 31-ի կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստի

Օրակարգ

1. Բակալավրիական կրթական ծրագրի «Կենսաբանություն» և «Քիմիա» մասնագիտությունների ուսումնական պլանների մասնագիտական առարկաների ցանկի համապատասխանեցումը հանրակրթական դպրոցում դասավանդվող առարկայական պլաններին /զեկուցողներ՝ Ս.Պիպոյան, Տ. Թանգամյան, Մ. Երիցյան/
2. Դասախոսների հաղորդումն առաջին կիսամյակի քննությունների ընթացքի մասին
3. 2021-2022 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում դասավանդվող առարկաների առարկայական նկարագրերի, թեմատիկ տրոհումների, ուսումնական նյութերի և հարցաշարերի մասին
4. Google Classroom հարթակում ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից իրականացվող աշխատանքների (ԱՈՒՄՓ-ների մշակվածություն, առարկայական նկարագրեր, թեմատիկ տրոհումներ) և առկա ուսուցման համակարգում 2021-2022 ուս. տարվա 2-րդ կիսամյակի ուսումնական գործընթացի կազմակերպման նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն /զեկուցողներ՝ ամբիոնի դասախոսներ/
5. Ամբիոնի հայցորդ Ելենա Ամիրյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և ղեկավարի քննարկում
6. Ընթացիկ հարցեր

Նիստը վարեց կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Պիպոյանը: Նիստին մասնակցում էր կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 15 (տասնհինգ) անդամ և կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի դեկան, կենսաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ Ռուզաննա Ռոբերտի Սադոյանը:

1.Լսեցին

Ս. Պիպոյանի, Տ. Թանգամյանի, Ռ. Սիմոնյանի հաղորդումը բակալավրիական կրթական ծրագրի «Կենսաբանություն» մասնագիտության ուսումնական պլանների մասնագիտական առարկաների ցանկի համապատասխանեցումը հանրակրթական դպրոցում դասավանդվող առարկայական պլաններին: Ամբիոնի վարիչը հանձնարարեց

քիմիա դասավանդող դասախոսներին մեկշաբաթյա ժամկետում իրականացնել քննարկում և գրավոր ներկայացնել համապատասխան տեղեկանք:

Արտահայտվեցին՝

Ի. Սիրեկանյանը, Վ. Հովսեփյանը:

Որոշեցին՝

- Ընդունել ի գիտություն:
- Ընդունել ի կատարումն:

2. Լսեցին

Դասախոսները ներկայացրեցին իրենց կողմից դասավանդած առարկաների ընթացիկ ստուգումների և ամփոփիչ քննությունների արդյունքների մասին:

Դասախոսները նշեցին, որ հիմնական խնդիրը եղել է ուսանողների քննություններին տարբեր պատճառներով չներկայանալը:

Որոշեցին՝

- Ընդունել ի գիտություն:

3.Լսեցին՝

Ամբիոնի դասախոսների հաղորդումները 2021-2022 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում դասավանդվող առարկաների առարկայական նկարագրերի, թեմատիկ տրոհումների, ուսումնական նյութերի և հարցաշարերի առկայության մասին: Քննարկվեց դրանց համապատասխանեցումը ներկայացվող պահանջներին:

Որոշեցին՝

Հաստատել:

4. Լսեցին՝

Ս.Պիպոյանի հաղորդումը Google Classroom կրթական էլեկտրոնային հարթակում 2021-2022 ուստարվա 1-ին կիսամյակում առկա և հեռակա համակարգում կատարած աշխատանքների և մշտադիտարկման արդյունքների մասին: Ամբիոնի վարիչը ներկայացրեց մշտադիտարկման արդյունքները: Ս.Պիպոյանը խնդրեց դասախոսներին շտկել արձանագրված թերացումները:

Ամբիոնի վարիչը տեղեկացրեց 2021-2022 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում Google Classroom կրթական էլեկտրոնային հարթակում նախատեսվող աշխատանքների մասին: Մինչև ս.թ. փետրվարի 6-ը Google Classroom կրթական էլեկտրոնային հարթակում տեղադրել դասավանդվող առարկաների առարկայական նկարագրերի, թեմատիկ տրոհումների, ուսումնական նյութերի և հարցաշարերի:

Որոշեցին՝

- Ընդունել ի գիտություն:

- Ընդունել ի կատարումն:

5. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումն ամբիոնի հայցորդ Ելենա Վարոսի Ամիրյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և ղեկավար նշանակելու վերաբերյալ: Ատենախոսության թեմա առաջարկվեց «Արարատի և Արմավիրի մարզերի ջրային էկոհամակարգերի ձկների բեղունությունը և դրա վրա ազդող գործոնները» վերնագիրը, իսկ ղեկավար՝ Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սամվել Խաչատուրի Պիպոյանը:

Արտահայտվեցին՝

Ռ.Սադոյանը, Ն.Կնյազյանը:

Որոշեցին՝

Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի խորհրդի քննարկմանը ներկայացնել «Արարատի և Արմավիրի մարզերի ջրային էկոհամակարգերի ձկների բեղունությունը և դրա վրա ազդող գործոնները» թեման որպես Ելենա Վարոսի Ամիրյանի ատենախոսության վերնագիր, իսկ գիտական ղեկավար՝ Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սամվել Խաչատուրի Պիպոյանը:

6. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումն ամբիոնի հայցորդ Լիլիթ Կոմիտասի Հակոբյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման վերաբերյալ: Ատենախոսության թեմա առաջարկվեց «Ավագ դպրոցի սովորողների առանցքային կոմպետենցիաների ձևավորումը քիմիայի ուսուցման գործընթացում»:

Արտահայտվեցին՝

Ռ.Սադոյանը, Ս. Պիպոյանը, Ի. Սիրեկանյանը:

Որոշեցին՝

Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի խորհրդի քննարկմանը ներկայացնել «Ավագ դպրոցի սովորողների առանցքային կոմպետենցիաների ձևավորումը քիմիայի ուսուցման գործընթացում» թեման որպես Լիլիթ Հակոբյանի ատենախոսության վերնագիր:

7. Լսեցին՝

Ամբիոնի վարիչի հաղորդումը ավարտական կուրսերի ուսանողների համար մասնագիտական առարկաներից (մինչև նախնական քննություն իրականացնելը) խորհրդատվություններ կազմակերպելու անհրաժեշտության մասին:

Ս.Պիպոյանը հանձնարարեց Դ. Անիկյանին կազմել խորհրդատվությունների ժամանակացույց:

Որոշեցին՝

- Ընդունել ի գիտություն:
- Ընդունել ի կատարումն:

8.Լսեցին՝

Ս. Պիպոյանի հաղորդեց առ այն, որ ՀՊՄՀ 100 ամյակի շրջանակում յուրաքանչյուր ֆակուլտետին կտրամադրվի «Մանկավարժական համալսարան» պաշտոնաթերթի մեկ ամբողջական համար: Այդ իսկ պատճառով ամբիոնի դասախոսներ՝ Մ. Երիցյանին, Տ. Թանգամյանին, Ա. Բաբախանյանին, Ա. Կիրակոսյանին, Վ. Հովսեփյանյին, Ի. Սիրեկանյանին, Ռ. Սիմոնյանին հանձնարարվեց մինչև ս.թ. փետրվարի 21-ը ներկայացնել համապատասխան տեղեկություններ, ամբիոնի պատմության, երախտավորների, անվանի շրջանավարտների, լավագույն ուսանողների, գիտական ձեռքբերումների, ֆակուլտետ դպրոց կապի մասին:

Որոշեցին՝

- Ընդունել ի գիտություն:
- Ընդունել ի կատարումն:

9.Լսեցին՝

Ս. Պիպոյանի հաղորդումը «Քիմիա» մասնագիտության մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող Մեհրաբյան Դոնարայի թեզի ղեկավար նշանակելու մասին: Ամբիոնի վարիչը Վ. Հովսեփյանին առաջարկեց ստանձնել Մեհրաբյան Դոնարայի թեզի ղեկավարումը:

Որոշեցին՝

Վ. Հովսեփյանը նշանակվեց «Քիմիա» մասնագիտության մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող Մեհրաբյան Դոնարայի թեզի ղեկավար:

10.Լսեցին՝

Ամբիոնի վարիչի հաղորդումը 2021-2022թթ. ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում փոխադարձ դասալսումների ժամանակացույցի մասին: (Կցվում է)

Որոշեցին՝

Հաստատել:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ս.ՊԻՊՈՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Դ.ԱՆԻԿՅԱՆ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N6
2022թ. փետրվարի 23-ի կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստի

Օրակարգ

1. Մանկավարժական պրակտիկայի ղեկավարների հաղորդումը պրակտիկայի անցկացման մասին:
2. Դասախոսների հաղորդումն առաջին կիսամյակի ընթացքում պարտք ունեցող ուսանողների մասին
3. Ամբիոնի դասախոսների հաղորդումը մագիստրոսական թեզերի, ավարտական աշխատանքների կատարման ընթացքի մասին
4. 2021-2022 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի փոխադարձ դասալսումների ժամանակացույցի հաստատման մասին
5. ՀՊՄՀ 100 ամյակի շրջանակում ս.թ. հոկտեմբեր ամսվա ընթացքում «Բնագիտական ժամանակակից հիմնախնդիրները» խորագրով նախատեսված գիտական նստաշրջանի մասին
6. Ընթացիկ հարցեր

Նիստը վարեց կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Պիպոյանը

Նիստին մասնակցում էր կենսաբանության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 11 (տասնմեկ) անդամ

1. **Լսեցին՝**

Առաջին կիսամյակում մանկավարժական և մանկավարժահետազոտական պրակտիկայի արդյունքների ամփոփումը, որը ներկայացրեց Ի. Սիրեկանյանը:

Արտահայտվեցին՝

Ս.Պիպոյանը:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

2. **Լսեցին՝**

Դասախոսների հաղորդումն առաջին կիսամյակի ընթացքում պարտք ունեցող ուսանողների մասին: Դասախոսները նշեցին, որ որևէ խնդիր չի եղել քննությունների ժամանակ: Լուծարքային փուլը դեռևս շարունակվում է:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

3. Լսեցին՝

Ամբիոնի դասախոսների հաղորդումը մագիստրոսական թեզերի, ավարտական աշխատանքների կատարման ընթացքի մասին: Դասախոսների կողմից ներկայացված հիմնական մտահոգությունը վերաբերվում է հեռակա ուսուցման համակարգում դասախոս-ուսանող ոչ լիարժեք փոխգործակցությանը: Դրա արդյունքում առանձին ուսանողների ավարտական աշխատանքները չեն իրականացվում կամ կատարվում են ոչ լիարժեք:

Արտահայտվեցին՝

Ա. Զիոյանը, Մ. Դալլաքյանը, Ա. Կիրակոսյանը, Ի. Սիրեկանյանը, Ա. Բաբախանյանը, Ա. Առուստամյանը:

Ս. Պիպոյանը կարևորեց, որ դասախոսները պետք է կապ հաստատեն և ուղղորդեն ուսանողներին, իրենց ավարտական աշխատանքները կատարելու, ինչպես նաև աջակցելու նրանց գործնական հանձնարարությունները իրականացնելու գործընթացում:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

4. Լսեցին՝

Ս.Պիպոյանի հաղորդումն ամբիոնում 2021-2022 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի փոխադարձ դասալսումների ժամանակացույցի հաստատման մասին:

Որոշեցին՝

Հաստատել:

5.Լսեցին՝

Ս. Պիպոյանը ներկայացրեց ՀՊՄՀ 100 ամյակի շրջանակում ս.թ. հոկտեմբեր ամսվա ընթացքում «Բնագիտական ժամանակակից հիմնախնդիրները» խորագրով նախատեսված գիտական նստաշրջանի մասին: Ս.Պիպոյանը նշեց՝ կարևոր է, որ գիտական նստաշրջանին ներկայացվող նյութերի համար սահմանվեն համապատասխան չափանիշներ:

Հանձնարարվեց Ա. Բաբախանյանին ճշտել մանրամասներ, թե ինչպիսի պահանջներ պետք է ներկայացնեն գիտական կոնֆերանսի համար:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

6.Լսեցին՝

Ս. Պիպոյանի հաղորդեց, որ ս.թ. ապրիլ ամսին տեղի կունենա ավարտական կուրսերում սովորող ուսանողների գիտելիքների ստուգման նախապաշտպանական փուլը: Կձևավորվի քննական հանձնաժողով, որն էլ կիրականացնի քննությունը:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

7.Լսեցին

Ս. Պիպոյանը հաղորդումը ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 25-ի N 1917-Ն որոշմանբ հաստատված «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով (առկա, հեռակա) 2022/2023 ուսումնական տարվա մասնագիտությունների և ընդունելության քննությունների» ցանկի վերաբերյալ:

Արտահայտվեցին

Ս. Պիպոյանը, Ա. Կիրակոսյանը, Ի. Սիրեկանյանը, Ա. Առուստամյանը:

Ամբիոնի դասախոսների կողմից ներկայացվեց համապատասխան առաջարկություն.

Ելնելով այն փաստից, որ դիմորդները ՀՊՄՀ կենսաբանության և քիմիայի բաժին ընդունվելու համար, կախված մասնագիտությունից հիմնականում պարապում են միայն մեկ մասնագիտական առարկա (կենսաբանություն կամ քիմիա)՝ 2022/2023 ուսումնական տարվա միասնական քննություններից: «Կենսաբանություն» մասնագիտության դեպքում ոչ մրցութային համարել քիմիա առարկան իսկ «Քիմիա» մասանագիտության դեպքում՝ կենսաբանություն առարկան:

Որոշեցին

Կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի ս.թ. փետրվարի 23-ի №6 նիստով որոշված առաջարկությունը ներկայացնել ՀՊՄՀ ղեկավարությանը:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ս.ՊԻՊՈՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Դ.ԱՆԻԿՅԱՆ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N7

2022թ. մարտի 14-ի, 15 -ի կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի արտահերթ նիստի

Օրակարգ

1.Հեռակա բակալավրիատի 5-րդ կուրսի ուսանողների հաշվետվությունը իրենց կողմից կատարվող ավարտական աշխատանքների մասին:

2.Ընթացիկ հարցեր

Նիստը վարեց կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Պիպոյանը
Նիստին մասնակցում էր կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 9 (ինը) անդամ:

1. **Լսեցին՝**

Ըստ նախօրոք կազմված ժամանակացույցի հեռակա բակալավրիատի թվով 25 ուսանող ներկայացրերին իրենց կատարած աշխատանքները: Յուրաքանչյուր աշխատանքի ներկայացումից հետո դասախոսների կողմից հնչեցվեցին հարցեր, ծավալվեցին մասնագիտական քննարկումներ, ուսանողներին առաջարկվեց կատարել տեխնիկական և բովանդակային փոփոխություններ և համապատասխան լրացումներ:

Որոշեցին՝

Հեռակա բակալավրիատի 5-րդ կուրսի թվով 25 ուսանողի ավարտական աշխատանք թույլատրել նախապաշտպանության.

- ✓ **«Կենսաբանություն» մասնագիտություն**

1.Ազատյան Սեդա Վաղինակի

2.Ալեքսանյան Անիտա

3. Անտոնյան Արուսյակ Արայի

4. Ապրեսյան Սիրարփի Պետրոսի

5. Բալասանյան Անահիտ Ռոբերտի

6. Գալոյան Սոսե Անդրանիկի

7. Գևորգյան Հասմիկ Դերենիկի

8. Խաչատրյան Արթուր Անդրանիկի

9. Հակոբյան Զարուհի Սեդրակի

10. Ղարիբյան Ելիզավետա Արթուրի

11. Մելքոնյան Լիաննա Սարգսի

12. Միքայելյան Աստղիկ Արամի

13. Մկրտչյան Լուսինե Նվերի

14. Սարգսյան Քրիստինե Հրանտի

15. Սիմոնյան Շողիկ Վազգենի

16. Սողոմոնյան Գայանե Վարդանի

17. Վարդանյան Իդա Արայի

18. Վարդանյան Սյուզի Արտյոմի

19. Քոչարյան Դիանա Պատվականի

- ✓ **«Քիմիա» մասնագիտություն**

1. Գրիգորյան Վարսենիկ Մավրիկի

2. Դանիելյան Քրիստինե Մելսիկի

3. Հայրապետյան Մարիաննա Սահակի

4. Ղարիբյան Մերի Սերոբի

5. Մովսիսյան Մարգարիտա Գագիկի

6. Շահմուրադյան Անի Բենիկի

Հեռակա բակալավրիատի 5-րդ կուրսի թվով 7 ուսանողի ավարտական աշխատանքները չեն համապատասխանում ներկայացվող պահանջներին և ունեն բավականին թերացումներ:

«Կենսաբանություն» մասնագիտության

1.Գալոյան Սոսե Անդրանիկի

2.Միքայելյան Աստղիկ Արամի

3. Սարգսյան Քրիստինե Հրանտի

4. Քոչարյան Դիանա Պատվականի

«Քիմիա» մասնագիտության

1. Գրիգորյան Վարսենիկ Մավրիկի

2. Հայրապետյան Մարիաննա Սահակի

3. Մովսիսյան Մարգարիտա Գագիկի

Ամբիոնի վարիչի կողմից վերոնշյալ ուսանողներին տրվեց ժամանակ մինչև նախապաշտպանությունը շտկել առկա խնդիրները:

2.Լսեցին՝

Ս.Պիպոյանի հաղորդումն առ այն, որ հաշվի առնելով էլեկտրոնային ամփոփագրերի ուսանողների կողմից ստացված միջանկյալ և ամփոփիչ գնահատականների ներմուծման անհրաժեշտությունը հանձնարարվեց՝

- ամբիոնի դասախոսներին ամփոփագրերը բացվելուց հետո դրանք լրացնել ինքնուրույն,
- ամբիոնի մասնագետ Դ. Անիկյանին դասախոսներին տեղյակ պահել ամփոփագրերի հասանելիության և դրանց չլրացված լինելու մասին,
- ամբիոնի մասնագետ Դ. Անիկյանին տեղյակ պահել ամբիոնի վարիչին չլրացված ամփոփագրերի առկայության մասին:

Որոշեցին՝

- Ընդունել ի կատարումն:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ս.ՊԻՊՈՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Դ. ԱՆԻԿՅԱՆ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N8

2022թ. մարտի 29-ի կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստի

Օրակարգ

1. Ամփոփիչ ատեստավորման և նախնական քննությունների իրականացման մասին
2. 2021-2022թթ. ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի կուրսային աշխատանքների թեմաների ներկայացում և հաստատում
3. 2022-2023թթ. ուսումնական տարվա ընտրովի դասընթացների թեմաների առաջարկում և քննարկում
4. Դասալսումների ընթացքի մասին

Նիստը վարեց կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Պիպոյանը
Նիստին մասնակցում էր կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 9 (ինը) անդամ:

1. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումն առ այն, որ ս.թ. ապրիլի 11-ից ավարտական կուրսերում մեկնարկում է ուսանողների մնացորդային գիտելիքների ստուգումը՝ նախօրոք սահմանված ժամանակացույցի համաձայն: Ամբիոնի վարիչը հանձնարարեց դասախոսներին, ովքեր չեն կատարել խորհրդատվություններ նախատեսված ժամանակացույցի համաձայն՝ մինչև ս.թ. ապրիլի 11-ը կատարել դրանք: Բացի այդ, ամբիոնի վարիչը առաջարկեց ձևավորել քննական հանձնաժողով հետևյալ կազմով: Կենսաբանություն մասնագիտության գծով՝ Ս.Պիպոյան, Տ. Թանգամյան, Ռ. Սիմոնյան, Ն. Հարությունյան, Ա.Կիրակոսյան, իսկ քիմիա մասնագիտության գծով՝ Ս.Պիպոյան, Մ. Երիցյան, Ա. Առուստամյան, Ա. Բաբախանյան, Ի. Սիրեկանյան:

Արտահայտվեցին՝

Ռ. Սիմոնյան, Ն. Հարությունյան, Ք. Կարապետյան:

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

2. **Լսեցին՝**

Ամբիոնի վարիչի հաղորդումը 2021-2022թթ. ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի կուրսային աշխատանքների թեմաների հաստատման մասին: (Կցվում է)

Ս.Պիպոյանը նշեց, որ թեմաներ առաջադրելիս հարկավոր է հաշվի առնել, որ դրանք հետագայում հիմք հանդիսանան դիպլոմային աշխատանքների համար: Հարկավոր է հաշվի առնել նաև ուսանողների նախասիրությունները: Բացի այդ, ամբիոնի վարիչը տեղեկացրեց, որ աշխատանքները չպետք է լինեն միայն տեսական և տարբեր աղբյուրներից արտագրված, այլ պետք է ունենան վերլուծական, համեմատական և հետազոտական բնույթ:

Արտահայտվեցին՝

Ռ. Սիմոնյանը, Ն. Հարությունյանը, Ք. Կարապետյանը:

Որոշեցին՝

Հաստատել:

3. Լսեցին՝

Ամբիոնի վարիչի հաղորդումը 2022-2023թթ. ուսումնական տարվա ընտրովի դասընթացների թեմաների մասին: Ս. Պիպոյանը հանձնարարեց դասախոսներին մտածել, թե ինչ ընտրովի դասընաց կցանկանային կարդալ 2022-2023թթ. ուստարում և մշակել դրանք մինչև 2022թ.-ի մայիսը: Ներկայացված թեմաները կքննարկվեն ամբիոնի նիստում և մրցունակ տարբերակները կընտրվեն, որպես տվյալ դասախոսի կողմից դասավանդվող ընտրովի դասընթաց: Նշվեց, որ պետք է հաշվի առնել որքանով է դասավանդվող ընտրովի առարկան արդիական և անհրաժեշտ ապագա ուսուցչին:

Արտահայտվեցին՝

Ի. Սիրեկանյանը, Ա. Առուստամյանը, Ն. Հարությունյանը:

Որոշեցին՝

- Ընդունել ի գիտություն:
- Ընդունել ի կատարումն:

4. Լսեցին՝

Ս.Պիպոյանի հաղորդումն առ այն, որ դասալսումները պետք է հետևողականորեն իրականացվեն համաձայն հաստատված ժամանակացույցի և գրանցվեն գրանցամատյանում:

Որոշեցին՝

- Ընդունել ի գիտություն:
- Ընդունել ի կատարումն:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ս.ՊԻՊՈՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Դ. ԱՆԻԿՅԱՆ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N9
2022թ. ապրիլի 19-ի, 22-ի կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստի

Օրակարգ

1. Ավարտական աշխատանքների նախապաշտպանություն
2. Ընթացիկ հարցեր

Նիստը վարեց կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Պիպոյանը Նիստին մասնակցում էր կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 12 (տասներկու) անդամ:

1.Լսեցին՝

Ս.Պիպոյանի հաղորդումն առ այն, որ մեկնարկում է առկա բակալավրիատի ավարտական աշխատանքների նախապաշտպանության վերջանական փուլը և այն ուսանողների աշխատանքները, որոնք կհամապատասխանեն ներկայացվող պահանջներին, չեն ունենա բովանդակային թերություններ կերաշխավորվեն հրապարակային պաշտպանության:

Ըստ նախօրոք կազմված ժամանակացույցի բակալավրիատի թվով 24 ուսանող ներկայացրերին իրենց կատարած աշխատանքները: Յուրաքանչյուր աշխատանքի ներկայացումից հետո դասախոսների կողմից հնչեցվեցին հարցեր:

Նախապաշտպանությունների արդյունքում որոշեցին՝

Առկա բակալավրիատի «Կենսաբանություն» մասնագիտության 4-րդ կուրսի թվով 24 ուսանողի ավարտական աշխատանք թույլատրել հրապարակային պաշտպանության.

- ✓ **«Կենսաբանություն» մասնագիտություն**
  1. Ալեքսանյան Թամարա Համայակի
  2. Ամիրջանյան Ռոզա Ռուբենի
  3. Ավդալյան Ռիմա Մկրտչի
  4. Արշակյան Եպրաքսյա Հայկի

5. Գորանցյան Նանար Ներսիկի
6. Գրիգորյան Հասմիկ Գագիկի
7. Գրիգորյան Նարեկ Հովիկի
8. Եղիազարյան Արփինե Հովհաննեսի
9. Իվանյան Սեդա Բագրատի
10. Խաչատրյան Գայանե Արմենի
11. Խաչատրյան Ժաննա Մայիսի
12. Կարախանյան Լարիսա Ռուսլանի
13. Կիրակոսյան Զարուհի Աղվանի
14. Կյուրեղյան Էլեն Հայկի
15. Ղալաչյան Մարիամ Կարենի
16. Մարգարյան Անգելինա Լևոնի
17. Մարիկյան Արփինե Հովհաննեսի
18. Շիրինյան Ռուզաննա Նահապետի
19. Պապանյան Նարինե Արսենի
20. Վարդանյան Անի Պետրոսի
21. Օրբելյան Անահիտ Վլադիմիրի

- Թույլատրել Քնարիկ Զանդարյանին, Անի Թամրազյանին, Լենա Սրապիոնյանին մասնակցել ավարտական աշխատանքների նախապաշտպանության երկրորդ փուլին:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ս.ՊԻՊՈՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Դ. ԱՆԻԿՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N10

2022թ. ապրիլի 12-ի կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստի

Օրակարգ

1.Մագիստրոսական թեզերի նախապաշտպանություն

2.Ընթացիկ հարցեր

Նիստը վարեց կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Պիպոյանը Նիստին մասնակցում էր կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 12 (տասներկու) անդամ:

1.Լսեցին՝

Ս.Պիպոյանի հաղորդումն առ այն, որ մեկնարկում է մագիստրատուրայի մագիստրոսական թեզերի նախապաշտպանության վերջանական փուլը և այն ուսանողների աշխատանքները, որոնք կհամապատասխանեն ներկայացվող պահանջներին, չեն ունենա բովանդակային թերություններ կերաշխավորվեն հրապարակային պաշտպանության: Ուսանողները ներկայացրենի իրենց աշխատանքները:

Ըստ նախօրոք կազմված ժամանակացույցի մագիստրատուրայի թվով 7 ուսանող ներկայացրերին իրենց կատարած աշխատանքները: Յուրաքանչյուր աշխատանքի ներկայացումից հետո դասախոսների կողմից հնչեցվեցին հարցեր:

Կենսաբանություն մասնագիտության ուսանող Մարիամ Պողոսի Արևյանը նախապաշտպանության չէր ներկայացել:

Նախապաշտպանությունների արդյունքում որոշեցին՝

Առկա մագիստրատուրայի 2-րդ կուրսի թվով 5 ուսանողի մագիստրոսական թեզ թույլատրել հրապարակային պաշտպանության.

- ✓ **«Կենսաբանություն» մասնագիտություն**
  1. Թադևոսյան Լիլիթ Ավետիսի
  2. Քոսյան Հռիփսիկ Քերոբի
- ✓ **«Քիմիա» մասնագիտություն**
  1. Աբրահամյան Զվարթ Վազգենի
  2. Մկոյան Լենա Գագիկի
  3. Պողոսյան Հայկանուշ Ռուբենի

Թույլատրել Մարիամ Արևյանին, Տիգրան Կարապետյանին և Մերի Գրիգորյանին մասնակցել մագիստրոսական թեզերի նախապաշտպանության երկրորդ փուլին:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ս.ՊԻՊՈՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Դ. ԱՆԻԿՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N11

2022թ. մայիսի 10-ի,11-ի կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստի

Օրակարգ

1. Հեռակա բակալավրիատի ավարտական աշխատանքների նախապաշտպանություն
2. Ընթացիկ հարցեր

Նիստը վարեց կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Պիպոյանը:
Նիստին մասնակցում էր կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 12 (տասներկու) անդամ:

1.Լսեցին՝

Ս.Պիպոյանի հաղորդումն առ այն, որ մեկնարկում է հեռակա բակալավրիատի ավարտական աշխատանքների նախապաշտպանությունը և այն ուսանողների աշխատանքները, որոնք կհամապատասխանեն ներկայացվող պահանջներին, չեն ունենա բովանդակային թերություններ կերաշխավորվեն հրապարակային պաշտպանության: Ուսանողները ներկայացրենի իրենց աշխատանքները:

Ըստ նախօրոք կազմված ժամանակացույցի մագիստրատուրայի թվով 19 ուսանող ներկայացրերին իրենց կատարած աշխատանքները: Յուրաքանչյուր աշխատանքի ներկայացումից հետո դասախոսների կողմից հնչեցվեցին հարցեր:

Նախապաշտպանությունների արդյունքում որոշեցին՝

- Հեռակա բակալավրիատի ավարտական կուրսի թվով 19 ուսանողի ավարտական աշխատանք թույլատրել հրապարակային պաշտպանության.

✓ **«Կենսաբանություն» մասնագիտություն**

1.Ազատյան Սեդա Վաղինակի
2.Ալեքսանյան Անիտա Անդրեյի
3. Անտոնյան Արուսյակ Արայի
4. Ապրեսյան Սիրարփի Պետրոսի
5. Բալասանյան Անահիտ Ռոբերտի
6. Գալոյան Սոսե Անդրանիկի
7. Գևորգյան Հասմիկ Դերենիկի
8. Խաչատրյան Արթուր Անդրանիկի
9. Հակոբյան Զարուհի Սեդրակի
10.Ղարիբյան Ելիզավետա Արթուրի

11.Մելքոնյան Լիաննա Սարգսի
12.Միքայելյան Աստղիկ Արամի
13.Մկրտչյան Լուսինե Նվերի
14.Սարգսյան Քրիստինե Հրանտի
15.Սիմոնյան Շողիկ Վազգենի
16.Սողոմոնյան Գայանե Վարդանի
17.Վարդանյան Իդա Արայի
18.Վարդանյան Սյուզի Արտյոմի
19.Քոչարյան Դիանա Պատվականի

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ս.ՊԻՊՈՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Դ. ԱՆԻԿՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N12

2022թ. մայիսի 12-ի կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստի

Օրակարգ

1.Հեռակա բակալավրիատի ավարտական աշխատանքների նախապաշտպանություն

2.Ընթացիկ հարցեր

Նիստը վարեց կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Պիպոյանը:

Նիստին մասնակցում էր կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 6 (վեց) անդամ:

1.Լսեցին՝

Ս.Պիպոյանի հաղորդումն առ այն, որ մեկնարկում է հեռակա բակալավրիատի ավարտական աշխատանքների նախապաշտպանությունը և այն ուսանողների աշխատանքները, որոնք կհամապատասխանեն ներկայացվող պահանջներին, չեն ունենա բովանդակային թերություններ կերաշխավորվեն հրապարակային պաշտպանության: Ուսանողները ներկայացրենի իրենց աշխատանքները:

Ըստ նախօրոք կազմված ժամանակացույցի մագիստրատուրայի թվով 6 ուսանող ներկայացրերին իրենց կատարած աշխատանքները: Յուրաքանչյուր աշխատանքի ներկայացումից հետո դասախոսների կողմից հնչեցվեցին հարցեր:

Նախապաշտպանությունների արդյունքում որոշեցին՝

- Հեռակա բակալավրիատի ավարտական կուրսի թվով 6 ուսանողի ավարտական աշխատանք թույլատրել հրապարակային պաշտպանության.

✓ **«Քիմիա» մասնագիտություն**

1. Գրիգորյան Վարսենիկ Մավրիկի
2. Դանիելյան Քրիստինե Մելսիկի
3. Հայրապետյան Մարիաննա Սահակի
4. Ղարիբյան Մերի Սերոբի
5. Մովսիսյան Մարգարիտա Գագիկի
6. Շահմուրադյան Անի Բենիկի

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ս.ՊԻՊՈՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Դ. ԱՆԻԿՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N13

2022թ. հունիսի 24-ի կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստի

Օրակարգ

1.Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի արդյունքների մասին
2.2022-2023 ուսումնական տարվա նախնական ծանրաբեռնվածության մասին
3.Ընթացիկ հարցեր

Նիստը վարեց կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Պիպոյանը:
Նիստին մասնակցում էր կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 11 (տասնմեկ) անդամ:

1.Լսեցին՝

Ս.Պիպոյանի հաղորդումն ամփոփիչ ատեստավորման արդյունքների մասին: Ամբիոնի վարիչը ներկայացրեց ամփոփիչ ատեստավորման արդյունքում ուսանողների ստացած գնահատականների վիճակագրությունը:

Ս. Պիպոյանը ներկայացրեց ավարտական աշխատանքների հետ կապված խնդիրները.

- Ավարտական աշխատանքները հիմնականում ձևակերպված էին ոչ ընդունված ձևաչափին համապատասխան, կային քերականական և տեխնիկական սխալներ:
- Ավարտական աշխատանքները օբյեկտիվ չեն գնահատվում և հիմնականում մանրամասն չեն ստուգվում գրախոսի կողմից:
- Ավարտական աշխատանքներում օգտագործված էր հին գրականություն:
- Հանձնաժողովի կողմից գնահատումը երբեմն սուբյեկտիվ է: Հարկ է մշակել գնահատման չափանիշներ՝ հասկանալու համար, թե ինչ բաղադրիչների հիման վրա է ձևավորվում ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի գնահատականը:
- Ուշադրություն դարձնել, թե որքանով են դասախոսի կողմից ուսանողին տրվող թեմաները հաղթահարելի տվյալ ուսանողի համար:

Ս. Պիպոյանը հավելեց, որ անհրաժեշտ է փոխել ղեկավարի կարծիքի ձևանմուշը: Ղեկավարը պետք է կարծիք գրի՝ ինչպես է աշխատել ուսանողը, տա նրա գործունեության բնութագիրը, այլ ոչ թե գնահատի ավարտական աշխատանքը:

Արտահայտվեցին՝

Ա. Կիրակոսյանը, Ա. Բաբախանյանը, Տ. Թանգամյանը:

Որոշեցին՝

- Ընդունել ի գիտություն:

2.Լսեցին՝

Ս.Պիպոյանի հաղորդումը ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի բեռնվածության նախնական տարբերակը: Ամբիոնի վարիչը ներկայացրեց ուսումնական գործընթացների հարցերով պրոռեկտոր Ն. Սաֆարյանի կողմից ստացված գրությունը՝ կապված ուսումնական ծավալների բաշխման հետ: (Կցվում է)

Ամբիոնի վարիչը հայտնեց որ դասաբաշխումը կատարվել է հաշվի առնելով յուրաքանչյուր դասախոսի մասնագիտական ուղղվածությունը:

Արտահայտվեցին՝

Ռ. Սիմոնյանը, Ա. Փիլթակյանը, Տ. Թանգամյանը:

3.Լսեցին՝

Տ. Թանգամյանի հաղորդումն այն մասին, որ ամբիոնում առկա է դասախոսներին համակարգչով ապահովելու խնդիր: Երբեմն դասախոսությունները անցկացվում են առանց տեխնիկական միջոցի, քանի որ այդ ընթացքում օգտագործվում են մեկ այլ դասախոսի կողմից:

Արտահայտվեցին՝

Ռ.Սիմոնյանը, Ա. Փիլթակյանը:

Որոշեցին՝

Ս.Պիպոյանը խնդրեց Ա. Փիլթակյանին՝ ամբիոնի դասախոսների դասացուցակը կազմելիս, հաշվի առնել նրանց դասախոսության ժամերի հաջորդականությունը և բացառել դրանց համընկնումը:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ս.ՊԻՊՈՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Դ. ԱՆԻԿՅԱՆ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N14

2022թ. օգոստոսի 29-ի կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստի

Օրակարգ.

1. Դասախոսների բեռնվածությունը նոր ուսումնական տարում
2. Դասախոսների կողմից ուսումնական նյութերի մշակումը և տեղադրումը էլեկտրոնային հարթակում
3. 2022-2023 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացիկ և ամփոփիչ ստուգումների հարցաշարերի վերաբերյալ:
4. Ընթացիկ հարցեր

Նիստը վարեց կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Պիպոյանը: Նիստին մասնակցում էր կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 12 (տասներկու) անդամ:

1. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումը նոր ուսումնական տարում դասախոսների բեռնվածության մասին: Ս.Պիպոյանը ներկայացրեց յուրաքանչյուր դասախոսի ժամաքանակն ըստ դասաբաշխման (բեռնվածությունը կցվում է):

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն:

2. **Լսեցին՝**

Ս.Պիպոյանի հաղորդումն էլեկտրոնային հարթակում դասախոսների կողմից ուսումնական նյութերի մշակման և տեղադրման մասին: Ամբիոնի վարիչը տեղեկացրեց, որ նյութերը պետք է տեղադրված լինեն սահմանված ժամկետներում և համապատասխանեն ներկայացվող պահանջներին:

Որոշեցին՝

- Ընդունել ի կատարումն և մինչև սույն թվականի սեպտեմբերի 10-ն ավարտել ուսումնական նյութերի տեղադրումը էլեկտրոնային հարթակում:
- Հաստատել 2022-2023 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի առարկայական նկարագրերը, թեմատիկ տրոհումները և ուսումնական նյութերը:

3. Քննարկվեց՝

2022-2023 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի միջանկյալ ստուգումների և բանավոր քննությունների հարցաշարերը:

Որոշեցին՝

Հաստատել 2022-2023 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի միջանկյալ և բանավոր քննությունների հարցաշարերը:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ս.ՊԻՊՈՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Դ. ԱՆԻԿՅԱՆ